

ԱՒԵՏԱԲԵՐ



Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու

21 յունուար 2018

ԺԷ. Տարի

Թիւ 4

ԱՌԱՋԱԻՈՐԻ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Եւթիւն, որ յանձն առիւ մարմնանալ Սուրբ եւ միշտ Կոյս Աստուածածինէն, անփոփոխելի՞՛ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստո՛ս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՛ Յօր եւ Յօգույն հետ փրկէ՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԱՉ

Փառքի թագաւոր Քրիստոսը, որ մեզի համար սուրբ Կոյսէն մարմնացաւ, խաչին վրայ համբերելով. միաբան երգով բարեբանեց:

Որ յանձն առաւ երեքօրեայ թաղումը, յարութիւն առաւ մեռելներէն իշխանութեամբ. միաբան երգով բարեբանենք:

Մեծ զօրութեամբ դժոխքի դռները խորտակեց, իր եկեղեցին զգեստաւորեց մեծ վայելչութեամբ, միաբան երգով բարեբանենք:

ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 64, 2 եւ 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսե՛ եւ ամէն մարմնաւոր Եակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՊԱՅՔԱՐ՝ ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԴԵՍ

**Պօղոս Առաքեալին Տիմոթէոսին ուղղած երկրորդ թուղթէն
(2 Տիմ 2, 15-26)**

Ջանա՛ ինքզինքդ ընտիր ներկայացընել Աստուծոյ, իբրեւ մշակ՝ առանց ամօթի, հաւատարիմ տնտես՝ ճշմարտութեան խօսքերուն:

Չզուշացի՛ր սին եւ ամբարիշտ խօսակցութիւններէն: Անոնց հեղինակները միշտ յառաջադէմ են ամբարշտութեան մէջ եւ անոնց խօսքերը աներներ կը սփռեն քաղցկեղի նման: Անոնցմէ են Փիլետոս եւ Զիմենոս, որոնք շեղեցան ճշմարտութենէն, պնդելով, թէ մեռելներու յարութիւնը արդէն իսկ կատարուած է եւ այսպէս շատերու հաւատքը կործանեցին:

Աստուծոյ դրած հաստատուն հիմերը սակայն, կը մնան անսասան՝ կնքուած այս խօսքերով. Տերը կը ճանչնայ իրենները եւ թող զգուշանայ անօրէնութենէ ով որ Տիրոջ անունը կը կանչէ:

Մեծ տան մէջ միայն ոսկեղէն եւ արծաթեղէն անօթներ չկան. այլ նաեւ փայտեղէն եւ կաւեղէն: Ոմանք սահմանուած

են ազնիւ գործածութեան, ուրիշներ՝ հասարակ գործածութեան: Եթէ ուրեմն մէկը ինքզինք մաքրէ այս մեղքերէն, որոնց մասին խօսեցայ, պիտի ըլլայ ընտիր անօթ մը՝ սրբուած, Տիրոջ հաճելի եւ ատակ՝ ամէն տեսակ բարի գործի: Փախի՛ր երիտասարդական կիրքերէ: Զետամուտ եղի՛ր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, միացած անոնց, որոնք մաքուր սրտով Տիրոջ անունը կը կանչեն: Չզուշացի՛ր խօլ եւ յիմարական հարցերէ. գիտես, թէ անոնցմէ կը ծնին կռիւները: Իսկ Տիրոջ ծառան պետք չէ կռուազան ըլլայ, այլ՝ հեզաբարոյ բոլորին հանդէպ, կարող՝ ուսուցանելու եւ անոխակալ: Զակառակորդները պետք է խրատէ հեզութեամբ, թերեւս Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու, ազատուելու սատանային որոգայթներէն, որ զանոնք գերի կը պահէ եւ հպատակ՝ իր կամքին:

Ալէլուիա, Ալէլուիա,

Դուն պիտի կանգնիս եւ գթաս Սիոնի, եկած է ժամը, ժամանակը հասած է որ գթաս անոր:

(Սաղմոս 101, 14)


Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅԻՍՈՒՍ ԿԸ ԶԱԼԷ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ

(Յովհ 6, 15-21)

Մեր Տեր Յիսուս Զրիստոս. իմանալով, թե պիտի գան յափշտակեն զինք ու թագաւոր հռչակեն, դարձեալ առանձին լեռ քաշուեցաւ: Իրիկունը Յիսուսի աշակերտները ծովեզերք իջան, նաւակ ելան ու մեկնեցան միւս ափը՝ Կափառնաում: Մութը կոխած էր արդէն, սակայն Յիսուս տակաւին չէր եկած: Հովը սկսաւ ուժգին փչել եւ ծովը ալեկոծեցաւ: Մօտ քսանհինգ կամ երեսուն ասպարեզ թիավարած էին, երբ նշմարեցին, որ Յիսուս ծովուն վրայէն քալելով՝ նաւակին կը մօտենար: Աշակերտները զարհուրեցան, բայց Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»: Ուզեցին զինք նաւակ առնել, սակայն նաւակը իսկոյն հասաւ այն վայրը, ուր կ'երթային:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Առաջաւորի բարեկենդան

Յովհաննու Աւետարանին համաձայն՝ երկոտասան աշակերտները առանձին կը նաւաբեկէին գիշերը, հողմը իրենց հակառակ ըլլալով՝ դիմացի ցամաքը չէին կրնար հասնիլ: Յառաջանալու անկարողութեան մատնուած Առաքեալներուն՝ Յիսուս օգնութեան կը հասնի ջուրերուն վրայ քալելով: Աստուածաշունչին մէջ Մովսէս մարգարէն հրամայեց որ ծովուն ջուրերը քաշուին, որպէսզի ժողովուրդը անցնի Կարմիր ծովը. այստեղ Յիսուս կը գերազանցէ մարգարէները. ան իբրեւ Տերը բնութեան, ջուրերուն վրայ կը քալէ: Ծովու վրայ քալելու պատմութեան մէջ կը տեսնենք Եկեղեցւոյ առաքելութիւնը, որ Քրիստոսի կրած գողգոթայի եւ չարչարանքներուն նման պիտի ըլլայ, որ սակայն պիտի պսակուի յարութեամբ: Ծովու ջուրերուն վրայ քալելու հրաշքը անցք մըն է

մահուրնէ դէպի կեանք: Աւետարանիչները միաձայնութեամբ կը պատմեն՝ թե առաքեալները սաստիկ երկիւղով լեցուեցան: Անոնք հիւանդներու, ախտաւորներու եւ դիւահարներու բժշկութիւններ շատ տեսած էին եւ Յիսուսի աստուածային կարողութեան հաւատացած էին, սակայն ծովին վրայ քալելը տեսնելով, ականատես եղան աստուածային փառքին:

Հայ Եկեղեցւոյ շարականներուն մէջ ծովի ալեկոծութիւնը կը նմանցուի մեղքերու բեռնան տակ խեղդող մարդուն: Կեանքը աշխարհի վրայ ուղեւորութիւն մըն է, որուն ընթացքին կ'աշխատինք հասնելու համար փրկութեան նաւահանգիստը, որուն կը ձգտին մեր հոգիները: Կեանքի սարսափազդու ալիքներուն մէջ Քրիստոս ներկայ է, հակառակ իր լուռ ու անտեսանելի ըլլալուն, բաւ է որ հաւատք ունենանք: Յիսուս մեզի

մօտ է, մենք ենք որ երբեմն չենք ուզեր իրեն դիմել եւ կը կապուինք մեր վախերուն եւ մեր սխալ դատողութեան: Այս հրաշքը մեզ կը մղէ խորհրդածելու Յիսուսի այն հարցադրումին թէ «ինչո՞ւ կը վախնաք, տակաւին հաւատք չունիք»: Ճշմարիտ հաւատքը գերազանցելու է ամեն վախ, յուսահատութիւն եւ հիասթափութիւն: Առաքեալները յաճախ տարակուսանքի,



կասկածամտութեան ու վախի պահեր ունեցան Տիրոջ անիմանալի խորհուրդին դիմաց: Այս հոգեվիճակը հասկընալով՝ Յիսուս յաճախ կը քաջալերեր զիրենք. «Մի՛ վախնաք»: Ամեն մարդ

վախի ու տարակոյսի կը մատնուի, սակայն այս մէկը նախատուեալն է ճշմարիտ հաւատքին, որ քրիստոսի յարութեամբ նոր ճանապարհի պիտի հարթէ:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Էմինա Քրիստինա Համզա՝ 15 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Էմա Շանթ Համալեան՝ 23 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Ժուլիա եւ Ժազման Ժերոմ Շամմասեան՝ 23 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Ալիք Րաֆֆի Մարքարեան՝ 24 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի

ՍՈՒՐԲ ՊՍԱԿ

Ժերայր Արամ Քէթիպեան ընդ Ժորժէթ (ճոյ) Շարպէլ Էլ-Աշաար՝
 30 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի

ՍԱՀԱԶԴ

Պերճուհի Արթինեան Տարաքճեան՝ 4 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Կիլի Համալեան Տիլիզեան՝ 8 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Ժոզէ՝ Ժորժ Կոստանդինեան՝ 8 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Էտմօն Նուպար Կոստանեան՝ 19 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Յարութիւն Արրահան ճապուրեան՝ 27 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի